խնդրեն կթղ.էն. որ պապին մօտ միջամտութիւն մը կատարէ, և միանգամայն կ'աղաչեն որ Պոլիս ղրկուի Զմիւռնիացի Յովհաննէս վրդ.ը որ Երուսաղէմէն Էջմիածին մեկնած էր, կը յիշուին նաև 200ի մօտ անձեր՝ եկեղեցական և աշխարհական, որ ընդունած են հռոմէական եկեղեցին. և այլն. (Կոռնիկ. 1863. էջ 662)։ Զմիւռնիացին Պոլիս գալով կը վարէ Կ. Պոլսի պատրիարքութիւնը (1707—8)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԿ. ԿՈԼՈՏ, ԲԱՂԻՇԵՑԻ.— Մբ. Ամրտօլու Ս. Կարապետ վանքին, աշկ. Վարդան վրդ. Բաղիշեցիին և ընկերակից Գրիգոր պտրք. Շղթայակիրի։ Վարդան վրդ.ի մահուանէ վերջ Գրիգոր և Կոլոտ կը մեկնին Ամրտօլէն և 1706ին ուխտի կուգան Տարոնի Ս. Կարապետ վանքը. 1709ի երկրաշարժին պատճառաւ Ս. Կարապետի պարտքերը դիզաբարդուած էին. Կոլոտ՝ Շղթայակրի կարգադրութեամբ Պոլիս կերթայ (1712—13) Ժողովել ողորմութիւն յաստուածասէր անձանց առ ի թեթևացուցանել պարտուցն ծանրութիւն. Կոլոտ Սուրբ Կարապետը պարտքէ կ'ազատէ եւ կ'օժտէ վանքը թանկագին սպասներով։ Այս միջոցին Երուսաղէմի պատրիարքութիւնը միացուած էր Պոլսի պատրիարքութեան և Ս. Յակոբի վանքը կը տնտեսէին աշխարհական փոխանորդներ զապզիմալ կամ պապա անունով. այդ պատճառով Ս. Յակոբը ծանր պարտքերու տակ ինկած՝ ենթարկուած էր կեղեքումներու (Հանեմ. էջ 101—157)։ Սահակ պտրք.ի և խորհրդականներու որոշումով Կոլոտ կը կարգուի Ս. Թորոսալ և Վէֆիլ Ս. Յակոբի վանքին, և 1713—14ին հասնելով Երուսաղէմ կ'ազատէ ճմուրդի տրուած սրբավայրերը ու ս. անոթները. այսպէս սակաւ ինչ շնչառութիւն եղեւ սրբոյ տանս այսորիկ։ Չորս տարուան մէջ պարտքերը վճարելու համար իր երաշխաւորութիւնը յարգուեցաւ։ Ամէն կողմէն յարգանք վայելեց և Երուսաղէմի փաշան կարի հաւանեցաւ Կոլոտի կարգադրութեան. գրեց սուլթան Մահմուտ կայսեր և ի նշան իր գնահատման խիլայեց հայոց վանքին Ս.Թորոսակալը։ Կոլոտ Միաբանութեան կարող անդամներուն և Հաննէ վրդ.ին ներկայութեան, իբր հիմնական կարգադրութիւն փշուր փշուր ըրաւ հաստատակաց կնիքը. այդ կնիքը կը կոչուէր Օրդայի կնիք կամ ըստ Կոլոտի կնիք պարտուց. այդ կնիքով էր որ Պոլսէն ղրկուած վի-